Ց. ՍՊԷՆԴԻԱՐԻ ՃԱՌԸ

(Արտասանված հոկտ. 13-ին Ներսիսեան դպրոցում)

—

Ես յանձնարարութիւն ունեմ «Մշակ» լրագրի կողմից ողջունել այսօրվայ մեծ ազգային տօնական հանդէսը։

Հայ գրերի գիւտը և հայկական տպագրութիւնը վերջնականապէս որոշեցին հայ ցեղի լինել թէ չը լինելը լուսաւորված ազգերի շարքում։

Այդ երկու նշանաւոր պատմական մոմենտները հանդիսացան հայ ազգի կեանքի մէջ երբև երկու հսկայ լուսատու ջահեր, որոնք պարթեցրին խաւարի և տգիտութեան մէջ ընկղմած հայի միտքն ու գիտակցութիւնը, արթնացրին նրա մէջ թմրած մտաւոր ույժերը, ցոյց տալով ժողովրդին բարոյապէս և մտաւորապէս զարգանալու ու աճելու ուղիղ ճանապարհը։

Հայ գրերի գիւտը տուեց մեզ հայ մատենագիրների մի փայլուն շարք, որոնց գործերը մինչև այսօր գրաւում են գիտնականների ուշքն ու միտքը։

Այդ՝ իր նշանակութեամբ եզակի գիւտը առեղծեց հայ գիտութեան և գրական շարժման ոսկեդար, որը հարստացրեց մեր պատմական մատենագրութիւնը նշանաւոր երկերով, նուիրված հայ ազգի պատմական անցեալի ճշգրիտ լուսաբանութեան։ Հայոց վանքերում, որոնք հնում լուսաւորութեան կենտրոններ էին, իսկ վանականները ուսումնականներ, սկսվեց մտաւոր եռուն կեանք, հիմնվեցին դպրոցներ գրագիտութիւնը ժողովրդի մէջ տարածելու համար։

Բայց և այնպէս հայ գիրը, հայ մտքի ստեղծագործութիւնը մատչելի էր միայն ժամանակվայ մտաւորականութեան նեղ շրջանին, իսկ ժողովուրդը իր ամբողջութեամբ մնաց զուրկ գրագիտութիւնից. և ահա հայ տպագրութեան գիւտը եկաւ լրացնելու այդ մեծ պակասը։ Այդ մոմենտից սկսած՝ հայ գիրը ստացաւ լայն շրջանառութիւն ժողովրդի ստուար խաւերում և դարձաւ ազգային լուսաւորութեան, նրա մտքի զարգացման խոշոր գործօններից մէկը, որը մինչև այսօր շարունակում է կատարել իր վեհ պաշտօնը։